

ցայ անձամբ եւ սրտիւ իմով. եւ մեծապէս ցաւեցայ ի վերայ տառապակրութեանն բարեկամին յայնմիկ. աւաղեմ ի վերայ ազգիս եւ զելս հրդեհման հալածանաց անգիտանամ, եւ դարմանամ ի վերայ այնքան խստասրտութեանց հակառակորդաց, եւ անխնայ թարց ողորմելոյ հարկանեցման խղճալեաց, որ յիրաւի եղեն խղճալիք եւ ողորմելիք. որոց հասցէ նոցա Տէր ի թիկունս օգնականութեան, եւ մէք պարտական եմք աղօթել վասն նոցա . . . ապիրատք ըստ ապիրատութեանց իւրեանց ընկալցին, եւ ամենայն հակառակորդաց տացէ Տէր զլուսաւորութիւն սրտից եւ մտաց իւրեանց, զի սկսեալ գործ իւրեանց եւ յառաջագրութիւնս նոցա, ոչ է գործ քրիստոնէի: . . . Չորեքին արքն, ի յուլիսի վերջին օրերն եկեալք ի փնէժու եւ մնացին միայն մէկ գիշեր ի տեղս. դիմեցին ի սուրբ տունն. մնալով անդ հինգ օր, եւ վերադարձան ի տեղս, եւ մնացին եօթն օր, սակս ոչ լինելոյն զհոգմն յաջողակ. . . Գրիգոր վրդապետ երբեմն եւ այլն:,,

11. 17 Մարտ 1779 Յարութիւն Պետան ի Կ. Պոլ. գրէ առ Հ. Աստուածատուր ի Թր. “... Տն Գրիգորի հեզահոգի Պատրիարքին եթէ գրեսցես, յատկապէս յինէն զյարգանս մատուցես, պարտաւոր դատեմ զիս գրել առ ինքն զամենայն անցս, բայց զի յաջորդն իւր բանադրեաց զիս, խնայեմ զինքն ի խղճմտանաց, եւ յորժամ արձակեցայց, գրեցից համարձակ, թէպէտ ոչինչ կապ զգամ ի յիս: . . .”